«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ,
ոստիկանության գեներալ-մայոր

Մ. Բաբայան

«03» 02 2020թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ. ընթացքում ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչության միջազգային համագործակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման բաժնի իրականացրած աշխատանքների վերաբերյալ

Հաշվետու ժամանակահատվածում բաժինը կազմակերպել և ապահովել է հետևյալ միջազգային միջոցառումների իրականացումը.

1. Ներքոհիշյալ 17 գործուղումներում կրթահամալիրի 29 ծառայողների մասնակցությունը. (Ն/Ժ 2018թ. - թվով 12 գործուղում, որին մասնակցել է 18 ծառայող):

1) հունվարի 20-ից փետրվարի 2-ը Վրաստանի Թբիլիսի քաղաքում կայացած «Պաշտպանության կառավարումը անվտանգության ավելի լայն շրջանում» թեմայով միջազգային դասընթաց - 1 ծառայող,
2) մայիսի 13-ից 16-ը ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի համալսարանում կայացած կադրերի պատրաստման հարցերով միջազգային կլոր սեղան - 2 ծառայող,
3) մայիսի 13-ից 18-ը ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի համալսարանում կայացած «Նորարարական տեխնոլոգիաները բարձրագույն դպրոցում» թեմայով որակավորման բարձրացման ծրագիր - 5 ծառայող,
4) հունիսի 10-ից 14-ը Վրաստանի ՆԳՆ ակադեմիայում կայացած «Վրացական ոստիկանական շաբաթ» թեմայով դասընթաց - 1 ծառայող,
5) հունիսի 15-ից 30-ը ԱՄՆ Կանզաս նահանգում անցկացված Պարեկային ծառայության կազմակերպման ամերիկյան մոդելի առանձնահատկությունների ուսումնասիրություն - 1 ծառայող,
6) հուլիսի 8-ից 12-ը Վրաստանի Թբիլիսի քաղաքում կայացած «Հակամարտության կարգավորում» թեմայով դասընթաց – 1 ծառայող,
7) հուլիսի 8-ից 12-ը Կիպրոսի Նիկոսիա քաղաքում կայացած Եվրոպական Միության իրավապահ մարմինների գործակալության ռեզիդենտալ դասընթաց – 1 ծառայող,
8) սեպտեմբերի 6-ից 8-ը ՌԴ ՆԳՆ Կառավարման ակադեմիայում անցկացված ակադեմիայի հիմնադրման 90-ամյակին նվիրված միջոցառումներ, այդ թվում՝ ՆԳՆ (ոստիկանության) ղեկավար կազմի պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման հարցերով ԱՊՀ մասնակից պետությունների ՆԳՆ (ոստիկանության) բարձրագույն ուսումնական հաստատությունների ասոցիացիայի մասնակից բուհերի ռեկտորների ամենամյա 10-րդ հոբելյանական հանդիպում և 6-րդ ամենամյա Սպարտակիադա – 3 ծառայող,

9) սեպտեմբերի 15-ից 20-ը Հունաստանի Հանրապետության Սալոնիկ քաղաքում անցկացված Եվրոպական Միության իրավապահ մարմինների ուսուցման գործակալության կազմակերպած «Դասախոսների վերապատրաստում» թեմայով ռեզիդենտալ դասընթաց – 1 ծառայող,
10) սեպտեմբերի 21-ից 25-ը Բուլղարիայի Հանրապետության Սոֆիա քաղաքում անցկացված ԱՄՆ հետաքննությունների դաշնային բյուրոյի ազգային ակադեմիայի ընկերակցության եվրոպական մասնաճյուղի «Միասին մենք ավելի ուժեղ ենք՝ բազմաթիվ տարածաշրջանային արձագանքները տարբեր սպառնալիքներին» թեմայով 37-րդ վերապատրաստման դասընթաց - 1 ծառայող,
11) սեպտեմբերի 23-ից 28-ը ՌԴ ՆԳՆ Օմսկի ակադեմիայում կայացած պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման դասընթաց – 3 ծառայող,
12) հոկտեմբերի 6-ից 11-ը Եվրոպական Միության իրավապահ մարմինների գործակալության (CEPOL) փոխանակման ծրագիր - 1 ծառայող,
13) հոկտեմբերի 21-ից 26-ը ՌԴ ՆԳՆ Վ.Յա. Կիկոտի անվան Մոսկվայի համալսարանում կազմակերպված «Փորձաքրեագիտական ստորաբաժանումների կադրերի պատրաստման կազմակերպում» թեմայով որակավորման բարձրացման դասընթաց – 2 ծառայող,
14) նոյեմբերի 9-ից 16-ը Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Հանրային անվտանգության համալսարանում կազմակերպված միջազգային ոստիկանական 11-րդ ֆորումի գործադիր կոմիտեի նիստ և «Կիբերհանցավորության դեմ պայքար» խորագրով գիտական համաժողով – 2 ծառայող,
15) նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 14-ը Կանադայի Մունքի համաշխարհային գործերի և հանրային քաղաքականության դպրոցի Համաշխարհային արդարադատության ամբիոնում կազմակերպված Հատուկ կրթաթոշակ ծրագիր – 1 ծառայող,
16) դեկտեմբերի 2-ից 4-ը Եվրոպական Միության իրավապահ մարմինների գործակալության (CEPOL) 2019թ. փոխանակման ծրագրի ազգային համակարգողների հանդիպում – 1 ծառայող,
17) դեկտեմբերի 9-ից 14-ը Ուզբեկստանի Հանրապետության ՆԳՆ ակադեմիայում համագործակցության արձանագրության ստորագրում և մասնագիտական կրթական ծրագրերի համեմատական վերլուծության իրականացում – 2 ծառայող:

2. Հունիսի 11-ից 13-ը կրթահամալիրում կազմակերպել և անցկացրել է «Անչափահասների հանցավորության հակազդման քրեաիրավական, քրեադատավարական և քրեաբանական հիմնախնդիրները» թեմայով միջազգային գիտագործնական համաժողովը, որին մասնակցել են Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի Հանրապետության, Ուկրաինայի ոստիկանական 12 բարձրագույն ուսումնական և գիտահետազոտական հաստատությունների 21 ներկայացուցիչներ:

3. Միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից կազմակերպված 6 դասընթացներին մասնակցել է կրթահամալիրի 17 ծառայող (Ն/Ժ 2018թ. - թվով 6 դասընթաց, որին մասնակցել է 13 ծառայող).

Կրթահամալիրում անցկացված.

1) Հայ-ֆրանսիական ոստիկանության տարեկան համագործակցության շրջանակներում կազմակերպված «Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքար» թեմայով դասընթաց,
2) ԱՄՆ դեսպանատան կողմից կազմակերպված «Բանավոր պատկերների մեթոդիկայի կիրառումը օպերատիվ-հետախուզական միջոցառումներին իրականացման ընթացքում» թեմայով դասընթաց,

ՀՀ-ում անցկացված.

1) ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների ու մարդու իրավունքների գրասենյակի կողմից կազմակերպված «Ոստիկանության՝ մարդու իրավունքներին համահունչ գործունեությունը հավաքներին» թեմայով դասընթաց,
2) Եվրոպայի Խորհրդի կողմից կազմակերպված «Մարդու իրավունքների միջազգային չափորոշիչներին և լավագույն փորձին համապատասխան հարցաքննության մեթոդները» թեմայով դասընթաց,
3) ԱԳՆ դիվանագիտական դպրոցի կողմից կազմակերպված երկամսյա դասընթաց,
4) Էրազմուս Պլյուս հայաստանյան գրասենյակի կողմից կազմակերպված «Միջտարածաշրջանային գործընկերության միջոցով սոցիալական-ներառական ռազմավարության մշակումը և իրականացումը Հայաստանում և Բոսնիա և Հերցեգովինայում» թեմայով դասընթաց,
5) Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնի կազմակերպած թեմայով «Օտարերկրյա որակավորումների ճանաչման արդի հիմնախնդիրներ» թեմայով դասընթաց:

4. ՀՀ ոստիկանության կրթահամալիրի «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագրում տպագրվել են արտասահմանյան բուհերի ներկայացուցիչների 13 հոդվածները: Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական կազմի և սովորողների 6 հոդվածները տպագրվել են համագործակից բուհերի գիտամեթոդական ամսագրերում:

5. Կազմակերպվել են հետևյալ պատվիրակությունների 10 այցերը կրթահամալիր (Ն/Ժ 2018թ.՝ 5 ճանաչողական այց):

1) Իրանի Իսլամական Հանրապետության անվտանգություն և ոստիկանության պատվիրակության,
2) ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության հյուպատոսության պատվիրակության,
3) Նորվեգիայի երեխաների զարգացման միջազգային ծրագրի ներկայացուցչի և Ժնևի Ոչ բռնությանը հիմնադրամի աշխատակցի,
4) Բելառուսի Հանրապետության ՆԳՆ ներկայացուցիչների,
5) ԵԱՀԿ անդրազգային սպառնալիքների ստորաբաժանման ոստիկանության ռազմավարական հարցերի բաժնի համայնքային ոստիկանության գծով խորհրդականի,
6) Չեխիայի ոստիկանության ուսումնական դեպարտամենտի սպայի,
7) Եվրոպական միության տեխնիկական օժանդակման և տեղեկատվական փոխանակման (TAIEX) ծրագրի մարդկային ռեսուրսների ներկայացուցիչների,
8) Վրաստանի խորհրդարանի գլխավոր քարտուղարի,
9) Ղրղզստանի Հանրապետության ՆԳՆ լրատվական ծառայության պատվիրակության,

10) ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության միջազգային փորձագետի:

6. Սեպտեմբերի 23-ից 27-ը ՀՀ ոստիկանության կրթահամալիրում անցկացվել է «Կանալ-Կովկասյան հողապատնեշ» տարածաշրջանային հակաթմրանյութային գործողությունը, որի համակարգողն էր Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը (ՀԱՊԿ):

7. Սեպտեմբերի 30-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի և ՌԴ ՆԳՆ Օմսկի ակադեմիայի միջև համագործակցության շրջանակներում իրականացվեց «Անչափահասների իրավունքների պաշտպանություն. քրեաիրավական և քրեաբանական ասպեկտներ» թեմայով տեսակոնֆերանս:

8. Ապահովվել է կրթահամալիրի 1 ներկայացուցչի մասնակցությունը Բելառուսի Հանրապետության ՆԳՆ Մոգիլյովի ինստիտուտում կայացած հեռակա համաժողովին:

9. Ապահովվել է «ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՐԻԵՐԱ EXPO 2019» միջազգային մասնագիտացված ցուցահանդեսում կրթահամալիրի մասնակցությունը:

Հաշվետու ժամանակահատվածում բաժնի կողմից իրականացվել են նաև հետևյալ աշխատանքները.

- ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապի և լրատվության վարչության հետ համատեղ պատրաստվել է կրթահամալիրի գովազդային հոլովակը:
- Իրականացվել են «www.edupolice.am» կայքէջի դիզայնի թարմացման և արդիականացման աշխատանքները:
- Կրթահամալիրի հավատարմագրման գործընթացի շրջանակներում իրականացվել է և որակի համապատասխան ստորաբաժանում է ներկայացվել 9-րդ՝ արտաքին կապերը և միջազգայնացումը չափանիշի ինքնավերլուծությունը:
- ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի համալսարանի, Օմսկի ակադեմիայի, Կառավարման ակադեմիայի, Վոլգոգրադի ակադեմիայի և Ղազախստանի ՆԳՆ Ալմաթայի ակադեմիայի հետ համագործակցության շրջանակներում կրթահամալիրի էլեկտրոնային գրադարանը համալրվել է 77 անվանում գրքով ու գիտական հոդվածով:
- Համագործակցության արձանագրություններ են ստորագրվել Թբիլիսիի Իվան Ջավախիշվիլիի անվան պետական համալսարանի, ՌԴ ՆԳՆ Ռոստովի իրավաբանական ինստիտուտի և Ուզբեկստանի Հանրապետության ՆԳՆ ակադեմիայի հետ:
- Աշխատանքներ են տարվել Ուկրաինայի Ներքին գործերի Օդեսայի պետական համալսարանի և Ազգային ակադեմիայի, Բելառուսի Հանրապետության ՆԳՆ ակադեմիայի հետ համագործակցության արձանագրություններ ստորագրելու ուղղությամբ:
- Ապահովվել է «edupolice.am» կայքէջում գիտական, մշակութային և այլ բնույթի 221 միջոցառումների լուսաբանումը՝ անհրաժեշտության դեպքում նաև անգլերեն և ռուսերեն թարգմանություններով (Ն/Ժ 2018թ.՝ 154 նորություն):
- Պատշաճ կերպով պատասխաններ են ուղարկվել ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ էլեկտրոնային փոստով ստացված թվով 150 տեղեկատվական հարցումներին (Ն/Ժ 2018թ.՝ 104):
- Կրթահամալիրի պետի 22.02.2019թ. թիվ 93-Ա հրամանի պահանջներով «www.edupolice.am» կայքէջում համալրվել են ստորաբաժանումների վերաբերյալ տեղեկությունները:

- Պատրաստվել և տպագրվել է կրթահամալիրի գովազդային բուկլետը:
- 2019-2020 ուսումնական տարվա դիմորդների շրջանակներում կրթահամալիրի տեղեկատվական հարթակներում ծառայությունների որակը բարձրացնելու նպատակով անցկացվել է սոցիոլոգիական հետազոտություն:

Վերոնշյալ միջոցառումներն անցկացվել են ի կատարումն ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ռազմավարական և Արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման ռազմավարական պլանների 2017-2021թթ գործողությունների ժամանակացույցի, մասնավորապես.

- «Ստեղծել և կատարելագործել հենանշման (բենչմարքինգ) կարգը և լավագույն փորձի ուսումնասիրության ու տարածման քաղաքականությունը» (ՌՊ 1.1.6), «Զարգացնել Կրթահամալիրի գիտական ներուժը պետական և ոչ պետական կազմակերպությունների հետ՝ գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու նպատակով» (ՌՊ 3.2.2), «Ընդլայնել Կրթահամալիրի միջազգային համագործակցության ուղղությունները հաստատության զարգացման ծրագրին համահունչ» (ՌՊ 5.1.1)
  - Կրթահամալիրը համագործակցության արձանագրություններ և հուշագիր է ստորագրել Վրաստանի Իվան Ջավախաշվիլիի անվան պետական համալսարանի, ՌԴ ՆԳՆ Ռոստովի իրավաբանական ինստիտուտի և Ուզբեկստանի Հանրապետության ՆԳՆ ակադեմիայի հետ: Միևնույն ժամանակ ՉԺՀ-ում ստորագրվել է Միջազգային ոստիկանական կրթական համագործակցության ֆոռումի կանոնադրությունը: Սույն փաստաթղթերով նախատեսվում է նաև գիտական աշխատանքների իրականացման հնարավորություն: Ուզբեկստանի Հանրապետության ՆԳՆ ակադեմիայի և ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի համալսարանի հետ բենչմարքինգի նպատակով իրականացվել է փաստաթղթերի ուսումնասիրություն:
- «Ներդնել էլեկտրոնային համակարգում կիրառվող որակի գնահատման չափանիշներ և ապահովել գործառույթների իրագործման թափանցիկություն՝ ներքին և արտաքին շահակիցների, սովորողների ներգրավվածությունն համար, և ստեղծել անհրաժեշտ բարենպաստ պայմաններ՝ ուղղված որակի գնահատման գործընթացների բարելավմանը» (ՌՊ 1.1.10), «Ստեղծել և զարգացնել նորարարական կրթական միջավայր սովորողների, վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի շրջանում կրթական էլեկտրոնային հարթակի ձևավորման միջոցով՝ բարձր որակավորում ունեցող ուսումնաօժանդակ, վարչական կազմի համագործակցության ապահովման նպատակով» (ՌՊ 1.4.1), «Հիմնել և զարգացնել կրթության որակի ապահովման գործընթացները լուսաբանող էլեկտրոնային հարթակ» (ՌՊ 1.2.4), «Կազմակերպել հանրային կարծիքի ուսումնասիրություններ՝ Կրթահամալիրի գործունեությունը հասարակության արդի պահանջներին համահունչ դարձնելու նպատակով» (ՌՊ 4.1.3):
  - Արդիականացվել է կրթահամալիրի կայքէջը, ինչի արդյունքում թարմացվել է տեղեկատվությունը և ստեղծվել առանձին՝ «Որակի ապահովման գործընթաց»

հարթակը: Կայքէջը ՀՀ ինտերնետ տիրույթում այցելությունների վիճակագրությամբ գտնվում է 4453-րդ հորիզոնականում (նախորդ տարի 6739-րդ): Facebook սոցիալական ցանցում 1263-ով ավելացել են կրթահամալիրի էջի հավանումները (ընդամենը 4539 հավանում):

- «Ապահովել Կրթահամալիրի կայքէջում հաստատության վերաբերյալ լրատվության և սեփական գովազդային նյութերի հրապարակումը» (ՌՊ 4.1.1):
  - Հաշվետու ժամանակահատվածում կրթահամալիրի կայքէջում հրապարակվել է 215 նորություն 1395 լուսանկարներով:
- «Իրականացնել հանրային կապերի ոլորտում Կրթահամալիրի գործողությունների մշտադիտարկումը՝ PR գործունեությունն առավել արդյունավետ և նպատակային դարձնելու համար և ապահովել Կրթահամալիրի դրական վարկանիշի ամրապնդմանն ու բարձրացմանն ուղղված գովազդային-լրատվական, քարոզչական և մարքեթինգային միջոցառումները» (ՌՊ 4.1.2):
  - ՀՀ ոստիկանության կրթահամալիրի վարկանիշի բարձրացման 2019 թվականի միջոցառումների շրջանակներում նկարահանվել է կրթահամալիրը գովազդող տեսահոլովակ, կազմակերպվել են 2 ռադիոեթերներ:
- «Միջոցներ ձեռնարկել ապահովելու Կրթահամալիրի սովորողների և գիտամանկավարժական կազմի մասնակցությունը միջազգային փոխանակման ծրագրերին՝ բարձրացնելով ներգնա և արտագնա շարժունության ծրագրերում նրանց մասնակցությունը» (ՌՊ 5.1.3):
  - Միջազգային գիտական միջոցառումների վերաբերյալ ստացված հրավերները և համագործակցող հաստատությունների կողմից պլանավորվող միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը պատշաճ ներկայացվել է ուսումնական ստորաբաժանումների պրոֆեսորադասախոսական կազմին և սովորողներին: 2019թ. ընթացքում ՀՀ ոստիկանության կրթահամալիրը արտասահմանյան գործընկերներից ստացել է գիտական միջոցառումների վերաբերյալ 64 հրավեր, որից 57-ը առկա ձևաչափով, իսկ 7-ը՝ առցանց: Կրթահամալիրի ծառայողները մասնակցել են առկա ձևաչափով 17 գիտական միջոցառման, իսկ առցանց ձևաչափով՝ 2:
- «Զարգացնել Կրթահամալիրի հետազոտական աշխատանքների միջազգայնացման գործընթացները, ապահովել Կրթահամալիրի ներգրավումը Եվրոպական հետազոտական տարածքին» (ՌՊ 5.2.1), «Աջակցել արտասահմանյան վարկանիշ ունեցող գիտական հանդեսներում կրթահամալիրի դասախոսների հոդվածների հրատարակմանը և միջազգային ներկայացուցչական գիտաժողովներին մասնակցությանը» (ՌՊ 5.2.3):
  - Միջազգային համագործակցության և ՏՏ ներդրման բաժինն աշխատանքներ է իրականացրել պատշաճ կերպով իրազեկելու կրթահամալիրի անձնակազմին և սովորողներին արտասահմանյան գիտական հանդեսներում տպագրվելու հնարավորության մասին: Արդյունքում կրթահամալիրի 4 դասախոսի աշխատանքներ տպագրվել են ՌԴ և Բելառուսի Հանրապետության բուհերի գիտական ամսագրերում:

- Միջոցներ ձեռնարկել ապահովելու Կրթահամալիրի գիտամանկավարժական կազմի և ասպիրանտների ներգրավվածությունը տարբեր միջազգային գիտական նախագծերում և աջակցել դասախոսների ստաժավորմանը արտասահմանյան գիտահետազոտական կենտրոններում (ՌՊ 5.2.2):
  - Հաշվետու ժամանակահատվածում կրթահամալիրի գիտամանկավարժական կազմի 6 ներկայացուցիչներ և 1 ասպիրանտ մասնակցել են միջազգային գիտական 4 միջոցառման (որից 1-ը առցանց, 1-ը՝ հեռահար), որոնք անցկացվել են ՀՀ ոստիկանության կրթահամալիրում, ՉԺՀ Հանրային անվտանգության համալսարանում և Բելառուսի Հանրապետության ՆԳՆ Մոգիլյովի ինստիտուտում: Միևնույն ժամանակ կրթահամալիրի 12 դասախոս մասնակցել է 8 դասընթացների, այդ թվում՝ ստաժավորման և որակավորման բարձրացման:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
ուսումնամեթոդական և զարգացման վարչության
միջազգային համագործակցության և SS ներդրման
բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ

Գ. Դավթյան

«15» 01 2020թ.